

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Համբերութեան Պսակը

Արդ, ինչո՞ւ չար բաները յիշելով կատղածի նման կը վնասես եւ կը գրկես քեզ արքայութենէն, որուն հասնելու համար պէտք էր ամէն հնար գործադրէիր: Անցաւոր այս կեանքը, եթէ այսքան ցանկալի է, ինչ խօսք հապա այն կեանքի մասին, ուր ո՛չ ցաւ կայ ո՛չ տրտմութիւն:

Երանի, եւ երի՛ցս երանի անոնց, որոնք անոր կը հասնին: Նոյնպէս, չկայ ատելի թշուառական բիրապատիկ խղճալի քան անոնք, որոնք կը գրկուին անկէ: Հետեւաբար, որպէսզի արքայութիւնը ժառանգենք եւ ո՛չ թէ գեհէնը, ամէն բարիք գործենք: Նախ՝ մեր ընկերոջ ներելով, ապա խոստովանութեամբ, աղօթքով եւ ողորմութեամբ ջանանք մեր անձերը սրբել մեղքերէ, որպէսզի Պօղոսի խրատին համաձայն՝ բարի գործերով կատարեալ ըլլանք:

Ան, որ մասամբ առաքինի կեանք կը վարէ, այնպիսին կատարեալ չըլլար: Ի՞նչ կը շահի մէկը յաճախակի աղօթքներէ, երբ առատ կերպով ողորմութիւն չի տար, կամ կուտայ՝ մարդոց երեւելու համար եւ կամ Աստուծոյ կամքին համաձայն ողորմութիւն կուտայ եւ անով կը հպարտանայ, կամ թէ խոնարհութիւն ցոյց կուտայ եւ պահք կը պահէ, սակայն ընչասէր կ'ըլլայ, ի՞նչ որ Զրիստոսի ծառայութենէ կը հեռացնէ մեզ, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Չէք կրնար Աստուծոյ եւ ինչքերու ծառայել», (Հմմտ. Մատթ. 2. 24), Զրիստոս կ'ըսէ. կարօտեալին տուր, իսկ ան՝ աղքատներէն իյլէ: Զրիստոս կ'ըսէ. պէտք է ներել մեղաւորներուն, իսկ ան՝ պէտք է վնասել անմեղներուն: Զրիստոս կ'ըսէ ողորմած եղիր իսկ ան՝ անողորմ եղիր:

Յովնան Մանդակունի

Ի՞ՆՉ Է ԽՈՒՆԿԻՆ ԵՒ ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ ՈՂՈՐԴՄԱՆ ԵՐԱՆՈՒՄ:



Աստուծոյ խունկ մատուցելը կը նշանակէ սրտի խորերէն վեր բարձրացող ջերմեռանդ աղօթք, որ հանելի է Աստուծոյ առջեւ ու նաեւ յարգանքի եւ օրհնութեան արտայայտութիւնն է մարդուն իր Արարիչին հանդէպ:

Ժողովուրդին խնկարկելը կը նշանակէ Աստուծոյ շնորհաց բաշխումին, գոր կը կատարէ պատարագիչ ֆահանան թափօրի ատեն իր օրհնութեան աղօթքներով միատեղ: Պատարագի ընթացքին ալ երբ պատարագիչը մէջ ընդ մէջ օրհնութիւն կը բաշխէ, սարկաւազը՝ որպէս Ս. Սեղանի սպասաւոր եւ օգնական ֆահանայի, անոր հետ կը դառնայ դէպի ժողովուրդը եւ կը խնկարկէ:

Սարկաւազին կողմէ ֆահանային կատարուած խնկարկութիւնը յարգանքի արտայայտութիւն է Աստուծոյ ծառային՝ դեսպանին հանդէպ:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԲԻ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 23 ԱՊՐԷԼ 2023

ԹԻԻ 17

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ.9.23-31: Ա. Ստ. 2.1-10: Յհ. 2.23-3.12

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ)

Աւետարան ըստ Յովհաննէսի 2.23-3.12

Չատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր, ռեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՞նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողէմոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապէտ, գիտենք, որ դուն Աստուծոյ կողմէ զրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ որ կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողէմոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ քան է, որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

Յիսուս պատասխանեց. «Վստահ եղի՛ր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը, ուր որ ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Նիկողէմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»:

Յիսուս պատասխանեց. «Դուն, որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղի՛ր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատար ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ



Աշխարհամատուռ կը նշանակէ երեւելի մատուռ կամ եկեղեցի: Բառը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն: Աշխարհամատուռ, նաեւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը: Զատկուան տօնին յաջորդող երկրորդ Կիրակին եկեղեցական տօներու շարքին, կը յիշատակուի նաեւ Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի տօնը: Աշխարհամատուռը, մեզի կը յիշեցնէ Քրիստոնէութեան առաջին մատուռը, որ հիմնրեցաւ վերնատան կից, առաքելներու կողմէ:

Առաքելները, Յիսուսի կարգադրութեան համաձայն, Իր համբարձումէն յետոյ, կը հաւաքուէին վերնատուն՝ Սիոնի բարձունքին, կը յիշէին իրենց վարդապետը եւ կը կատարէին վերջին ընթրիքի ժամանակ Անոր տուած պատգամը: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին եւ միասնաբար կը նաշէին: Հաւաքական կեանք կ'ապրէին: Աշակերտներուն հաւաքոյթներու առաջին աղօթավայրը կոչուեցաւ աշխարհի առաջին եկեղեցին՝ Աշխարհամատուռ, եւ անոր յիշատակին եկեղեցւոյ մէջ նշանակուեցաւ տօնական օր մը:

Աշխարհամատրան տօնը կրօնական եւ եկեղեցական տեսակէտէն մեծ նշանակութիւն կը ներկայացնէ: Ան Քրիստոսի հաստատած իտէալ եկեղեցին էր, եւ այս օրերու քրիստոնեայ աշխարհի, մանաւանդ եկեղեցւոյ կրօնապետներու երազած իտէալ եկեղեցին է, ուր բոլոր քրիստոնեաները կրնան միասնաբար աղօթել, հաղորդուիլ եւ գործել:

Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ Կանաչ Կիրակի: Կանաչ կոչումի նշգրիտ իմաստը դժբախտաբար ծանօթ չէ մեզի: Ոմանք այլաբանական իմաստ կը տեսնեն, որպէս նմանութիւն բնութեան եւ առաջին եկեղեցւոյ միջեւ: Կանաչ Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարակող եւ անող կեանքին, որ կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին եւ մարդկութեան: Աշխարհամատուռն ալ, որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիր, անեցաւ, ծլարակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհին վրայ տարածուած եկեղեցին:

ՈՍԿԵՂԵՆ ԽՕՍԸ

«Կ'աղաչեմ ձեզի ո՛վ մարդիկ, խօսքս ձեզի է, որ կ'ուղղեմ: Ո՛վ պարզամիտներ, խորագէտ եղէք, ո՛վ անմիտներ, խրատս պահեցէք ձեր սրտերուն մէջ: Լսեցէք զիս, որովհետեւ աղուոր բաներ պիտի ըսեմ ձեզի, շրթներս ուղիղ թելադրութիւններ պիտի ընեն ձեզի: Ես միշտ ճշմարտութիւնն է որ կը խօսիմ, ինծի համար պիղծ են ստախօս լեզուները: Առակ 8

Հ ՈՔԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՆԱԽ ԼՍԵՆՔ, ՅԵՏՈՅ ՎԿԱՅԵՆՔ

Մամարացի կինը լսելէ ետք Քրիստոսը, Մամարիա վազեց եւ այդտեղի բնակիչներուն ըսաւ. «Եկէք տեսէք: Մարդ մը կայ, որ իմ բոլոր ըրածներս ըսաւ ինծի: Արդեօք ա՛ն է Քրիստոսը» (Յն. 4.29): Եկեղեցւոյ հայրերը Մամարացի այս կինը կոչած են Մամարիա քաղաքին առաջին Աւետարանիչը: Բայց այս կինը զՔրիստոս աւետելէ եւ աւետարանելէ առաջ, նախ լսեց Քրիստոսը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈՔԵՒՈՐ ԴԱՍԸ

Խօսելէ ու վկայելէ առաջ Քրիստոսի մասին, նախ պէտք է լսենք Քրիստոսի ձայնը, ինչպէս Մամարացի կինը ինք լսեց, եւ յետոյ միայն երթանք ուրիշներուն, պատմենք անոնց Յիսուսի սիրոյն մասին, եւ հրաւիրենք զանոնք Քրիստոսի: Եթէ նախ լսենք Յիսուսը՝ յետոյ միայն խօսինք Յիսուսի մասին, վստահ եղէք, որ շատ մարդիկ պիտի կարենանք բերել Յիսուսի, ճիշդ ինչպէս Մամարացի կինը ինք բերաւ: Դժբախտութիւն է աշխատանք տանիլ մարդիկը արքայութեան դուռին մօտեցնել, երբ մենք դժոխքի դուռին քով վրան բացած ենք:

Ի՞նչ կը նշանակէ Հայ Եկեղեցի:

Հայ Եկեղեցի կը նշանակէ եկեղեցի հայերուն, այսինքն՝ եկեղեցի մը, որ ի բնէ կը պատկանի հայ ազգին կամ հայ ժողովուրդին: Ասոր համար կ'ըսուի նաեւ Հայոց Եկեղեցի:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ՄԵՂԵՐՈՒ ԾԱՆՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԳԱՍ, ԵՒ ԸՈՔԻԴ ԱՊԱՇԽԱՐԻՈՒԹԵԱՍԲ ԹԵԹԵՆԱԼՈՒ ԿԸ ՏԵՆՉԱՅ ԿԱՐՂԱ՝ Սաղմոս 6

Տէ՛ր, գայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս:

Ողորմէ՛ ինծի Տէ՛ր, տկար եմ ես: Բժշկէ՛ զիս, որովհետեւ մի՛նչեւ ուկորներս կը դողամ:

Հոգիս ծանր խռովի մէջ է, մի՛նչեւ ե՞րբ, Տէ՛ր:

Դարձի՛ր, Տէ՛ր, եւ փրկէ՛ զիս: Ագատէ՛ զիս մահուանէն, որովհետեւ ողորմած ես:

Որովհետեւ մահուան մէջ ո՞վ պիտի յիշէ քեզ. անդրաշխարհին մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:

Հեծեծելէն յոգնեցայ, ամէն գիշեր ես լացով լուացի իմ մահինս, եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:

Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ նեղութիւններէս:

Հեռացէ՛ք ինձմէ դու՛ք բոլորդ, որ անիրաւութիւն կը գործէք, որովհետեւ Տէ՛ր՛ լսեց իմ աղօթքս, եւ խնդրանքս ընդունեց:

Թող ամչնան ու սարսափի մատուրն բոլոր թշնամիներս, ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

ԱՄԷՆ ՕՐ ԲԱՆԱՆՔ ՄԵՐ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՄԷՋԷՆ ՄԵՐ ԱՂՕԹՔԸ ԿԱՏԱՐԵՆՔ ԱՌԱՍՏՈՒԱՏ